# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
## 30.06.2021թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/07» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «16» «03» 2022թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Արմեն Հարությունյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու») մի կողմից, և «Ալութսորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող») մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, հիմք ընդունելով 30.06.2021թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-21/07» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Հաշվի առնելով 198 000 (մեկ հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը՝ կողմերը որոշեցին.**

1.1 2022թ. համար նախատեսված ֆինանսական միջոցների մասով Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Պայմանագրի 3.2 կետում «20» թիվը փոխարինել «5» թվով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագրի և Պայմանագրի պայմանները կիրառվում են 01.01.2022թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է սույն համաձայնագիրը, ինչպես նաև Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Ալութսորս» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք |
| Հ/Հ՝ 900011192151 | ՀՎՀՀ 02639627 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | Հ/Հ 163007079839 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ՓԲԸ |
| Ղեկավար Ա. Հարությունյան | Տնօրեն Ա. Սարգսյան |
| ---------------------- (ստորագրություն) Կ.Տ. | ---------------------- (ստորագրություն) Կ.Տ. |

Հավելված N 1
« 16 » «03» 2022թ. կնքված N 1 համաձայնագրի

Հավելված N 2
«30» «06» 2021թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-21/07» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | |
| | | | մարտ | ապրիլ-հունիս | հուլիս-սեպտեմբեր | հոկտեմբեր-դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111180/501 | Ավտոմեքենաների լվացման – նմանատիպ ծառայություններ | 66 000 | 198 000 | 198 000 | 198 000 | **198 000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավար Ա. Հարությունյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
***«Աութսորս» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
ՀՎՀՀ 02639627
Հ/Հ 163007079839
«Հայէկոնոմբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Սարգսյան

---------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.